ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ԳՀԱՊՁԲ-21-3/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 05.04.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Մ. Գալաջյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 29.01.2021թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-21-3/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամ: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Սույն Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Վաճառողի կողմից մատակարարված ապրանքի դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Բագրևանդի5	ՀՀ, ք, Երևան, Միքայելյան 66
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ, Մետաքս մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 163218028989
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01283403
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Մ.ԳԱԼԱՋՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-3/1-1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Հ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը 2021թ. 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակների ընացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ.
1	Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեպսակ մեծ)	հատ	100	40,000	4,000,000	

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-3/1-1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 20.12.2021թ, ընդ որում՝		
Հ/հ	Գնման առարկան	CPV կոդը	2-րդ	3-րդ	4-րդ
1	Ծաղկային կոմպոզիցիաներ (Ծաղկեպսակ մեծ)	03121210/507	2160000	3105000	4000000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՄԵԳԱՄԱՐ» ՍՊԸ
Տնօրեն

Մ.ԳԱԼԱՋՅԱՆ